«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Շիրակի մարզի «Սիզավետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Աշխարհագրություն

Թեմա՝ Մանկավարժական հաղորդակցման դերը կրթական գործընթացում

Վերապատրաստող Կարինե Ալեքսանյան

Ուսուցիչ՝ Ռուզաննա Ղազարյան

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ առաջին: **Մանկավարժական հաղորդակցում--- 5**

Գլուխ երկրորդ: **Մանկավարժական հաղորդակցման հիմնական սկզբունքները----------10**

Եզրակացություն----------15

Օգտագործված գրականության ցանկ ----------17

Ներածություն

Հաղորդակցումը մարդկանց միջև սոցիալական շփման զարգացման բազմապլանային պրոցես է, որը ծնվում է համատեղ գործունեության պահանջմունքներից: Հաղորդակցումը մարդու կենսագործունեության պայմանն է, նրա առաջնային ու հիմնարար պահանջմունքներից մեկը, հետևաբար նաև դրա բավարարման պայմանը, հիմքն ու միջոցը: Առօրյա կյանքում, տանը, դպրոցում, աշխատավայրում, փողոցում և առհասարակ ամեն տեղ մենք անընդհատ գտնվում ենք հաղորդակցական իրավիճակներում, որտեղ շփվում ենք ծանոթ և անծանոթ մարդկանց հետ: Ինչ ասել է հաղորդակցում:

Հաղորդակցման միասնական պրոցեսում պայմանականորեն կարելի է առաջացնել երեք կողմեր՝ ինֆորմացիայի փոխանցում, փոխազդեցություն և փոխադարձ ընկալում: Հաղորդակցումը ոչ միայն առանձին մարդու, այլև հանրույթների՝ ցեղերի, ժողովուրդների, ազգերի, պետությունների գոյության ու զարգացման նախապայմանն է: Դրանով են մարդիկ ստեղծում խմբեր, հանրույթներ, մշակում համատեղ գործունեության ծրագրեր և նախանշում դրանց իրականացման ուղիները:Հաղորդակցումը նաև անձի ձևավորման ու սոցիալականացման կարևորագույն գործոն է:Դրա շնորհիվ ձևավորվում և զարգանում են հոգեկանին բնորոշ զուտ մարդկային ձևերն ու միջոցները, մասնավորապես գիտակցությունն ու լեզուն: Մարդիկ, որպես հաղորդակցման կարևորագույն միջոց, դիմում են լեզվի օգնությանը: Առանց լեզվի մարդիկ չեն կարող հաղորդակցվել միմյանց հետ և մտքեր փոխանակել :

Մարդը, իբրև անձ, չի կարող զարգանալ հասարակությունից դուրս, նրանից անկախ: Ինչպես ասում է հին աշխարհի մեծ իմաստասեր Արիստոտելը §մարդը հասարակությունից դուրս կամ աստված է կամ գազան¦: Իսկ Կառլ Մարքսը անձը դիտարկեց որպես հասարակական հարաբերությունների համակցություն և գտավ, որ ինչպիսին այն հասարակական հարաբերություններն են, որոնց պայմաններում ապրում ու գործում է մարդը, ինչպիսին նրա կենսագործունեությունն է, այնպիսին էլ ինքը մարդն է:«Անհատի զարգացումը,-գրում է Կառլ Մարքսը,-կախված է ուրիշ

անհատների զարգացման մակարդակից, որոնց հետ նա գտնվում է ուղղակի կամ անուղղակի հաղորդակցման մեջ»:

«Հաղորդակցումը մարդկային գանձերից ամենաշքեղ գանձն է,» -նկատել է Անտուան Էքզյուպերին: Այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն մարդկային հասարակության գոյության անհրաժեշտ պայմանն է, սերունդների կապի ու հաղորդակցության միջոցը, անձի ձևավորման կարևորագույն գործոններից մեկը: Իսկ նշանավոր հոգեբան Ս. Լ. Ռուբինշտեյնը «Հաղորդակցումը վերաբերմունք է աշխարհի, ուրիշ մարդկանց և ինքն իր նկատմամբ»:

Մանկավարժական հաղորդակցումը ըստ իրականացման ձևի ներկայացնում է սովորողի վրա մանկավարժի կողմից (և հակառակը) փոխազդեցության հնարների համակարգ: (Ա.Վ. Պետրովսկի):Մանկավարժական հաղորդակցման տակ հասկացվում է մանկավարժի և սովորողների կոլեկտիվի փոխազդեցության հնարների և ունակությունների համակարգը, որի բովանդակությունն են կազմում ինֆորմացիայի փոխանակությունը, փոխընբռման, կազմակերպման ուսումնադաստիրակչական ներգործության ցուցաբերումը: Մանկավարժը հանդես է գալիս որպես այդ պրոցեսի ինդիկատոր, կազմակերպում և ղեկավարում է այն: (Ա.Վ. Պետրովսկի):

Մանկավարժական հաղորդակցման գործընթացում կարևոր է ուսուցչի խոսքային ընդունակությունը: Խոսքային ընդունակությունը ուսուցչի մտքերն ու զգացմունքները խոսքի, ինչպես նաև դիմաշարժության ու մնջախաղի միջոցով պարզ ու հստակ արտահայտելու ընդունակությունն է: հաղորդակցումը հասարակական կյանքի համապարփակ երևույթներից մեկն է , այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները:

Ինֆորմացիայի հաղորդումը ուսուցչից աշակերտին կրում է հիմնականում երկրորդ ազդարարային խոսքային բնույթ: Այսինքն հաղորդակցման մեջ հաշվի է առնվում խոսքի ներքին և արտաքին առանձնահատկությունները: Ուսուցչի խոսքը տարբերվում է ներքին ուժով ու համոզվածությամբ: Վարպետ ուսուցչի խոսքը առաջին իսկ բառից, նախադասությունից ակտիվացնում է դպրոցականների միտքը և ուշադրությունը: Վարպետ ուսուցիչն իր խոսքին զուգակցում է հումորը, սրամտությունը, կատակը, բարյացկամ հեգնանքը: Նա խուսափում է հակիրճ

խոսքից, քանի որ աշակերտը այդպես լավ չի յուրացնի ուսումնական նյութը: Ուսուցիչն իր խոսքին պետք է տա չափված ձև: Աշակերտներին անհետաքրքիր է լսել միապաղաղ, միալար, ձգձգված խոսք: Շատ կարևոր է նաև խոսքի տեմպը: Արագ տեմպը խանգարում է յուրացմանը, հոգնեցնում է և երեխայի մոտ առաջացնում է պաշտպանական արգելակում: Բազմափորձ ուսուցիչը խուսափում է խոսքի դանդաղ տեմպից , քանի որ այն առաջացնում է ձանձրույթ: Խուսափում է նաև ճղճղան-ճչան ձայնից: Ցածր, կամաց ձայնը նույնպես անընդունելի է, որովհետև վատ է լսվում այն: ՈԻսուցչի ժեստերը պետք է լինեն չափավոր:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ : ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Հաղորդակցումը որոշում է անձի վարքագիծը, ձևավորում է նրա գիտակցությունը և ինքնագիտակցությունը, խթանում է անձի զարգացումը, կազմակերպում է մարդկանց համատեղ գործունեությունը: Այդ առումով չափազանց մեծ է մանկավարժական հաղորդակցման դերը դաստիարակության ու ուսուցման գործընթացի կազմակերպման, դպրոցականների անհատական զարգացման գործում: Կենդանի, անմիջական հաղորդակցման միջոցով իրագործվում է սոցիալական, կուլտուրական, բարոյական, գեղագիտական արժեքների փոխանցումը հասունացող սերնդին: Հաղորդակցման ընթացքում և հաղորդակցման միջոցով է կատարվում ուսուցիչ դաստիարակի դաստիարակչական ներգործությունները իր սաների գիտակցության ու վարքի վրա:

Հաղորդակցումը պահանջում է ոչ միայն գիտելիքներ ու ընդհանուր կուլտուրա, այլ նաև ստեղծագործական ինտուիցիա: Մանկավարժական հաղորդակցումը իրագործվում է ուսումնադաստիարակչական աշխատանքի բոլոր բնագավառներում ու փուլերում: Կարելի է մատնանշել ուսուցիչ դաստիարակի գործունեության այս տեսակները, որոնցում հաղորդակցումը ստանում է առանձնահատուկ նշանակություն.

- փոխադարձ վստահության ու հարգանքի եղանակի ստեղծում դասարանում
- փոխըմբռնում ուսուցիչ դաստիարակի և նրա սաների միջև
- սովորողների խորհրդատվություն ուսումնադաստիարակչական նպատակներով
- ստեղծագործական աշխատանքի մթնոլորտի ստողծում դասարանում
- օգնություն աշակերտներին՝ նրանց անձնական խնդիրների, կոնֆլիկտների լուծման գործում
- փոխընբռնման մթնոլորտի ստեղծում աշակերտների միջև
- անկախության և իր նկատմամբ պատասխանատվության զգացմունքի զարգացում
- նպաստել ուսուցիչների և աշակերտների հետաքրքրություններն ու պահանջմունքները հասկանալուն:

Մանկավարժական հաղորդակցման կրողը և ստեղծողը ուսուցիչ դաստիարակ անձնավորությունն է, որը արդյունավետ դասապրոցես անցկացնելու համար պետք է ճիշտ և գրագետ խոսելու հմտություն ունենա: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը հաղորդակցման ընթացքում լինի բարեհամբույր և հավասարակշռված: Զրույցը պետք է վարել հանգիստ, խաղաղ միջավայրում:

Մինև վերջերս մանկավարժական հաղորդակցում էր համարվում ուսուցման և դաստիարակության նպատակով ուսուցչի նաշակերտի միջև կառուցվող խոսքային հաղորդակցումը: Սակայն, իր լայն իմաստով, այն ընդգրկում է բոլոր այն հաղորդակցման ձևերը, որոնց ընթացքում տեղի է ունենում ուսուցում, դաստիարակություն, ձևավորում և զարգացում: Այս առումով, որպես մանկավարժական հաղորդակցում կարելի է դիտարկել և ուսուցիչ-աշակերտ, և ծնող-երեխա, և դասախոս-ուսանող հաղորդակցումը, իսկ արդի ուսուցման համագործակցային մեթոդի արդյունավետության տեսանկյունից, նաև ուսանող-ուսանող, աշակերտ-աշակերտ հաղորդակցումը: Այն նշանակալի է դառնում հատկապես այնպիսի խնդիրների լուծման ընթացքում, ինչպիսիք են առարկայական ուսուցումը, դաստիարակությունը՝ շփման և համատեղ գործունեության տեսանկյունից:

Ըստ Վ. Ցելյուկոյի. Մանկավարժական հաղորդակցումը մասնագիտական հաղորդակցություն է ուսուցչի և աշակերտի միջև դասի ու արտադասարանական շփման ընթացքում, որն ունի որոշակի մանկավարժական գործառույթներ,ուղղված է բարենպաստ հոգեբանական կլիմայի ստեղծմանը, ուսումնական գործունեության և ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների լավացմանը՝ ուսումնական խմբի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ այն հարաբերությունների հաստատման, կազմակերպման ու զարգացման, աշակերտի և ուսուցչի փոխըմբռնման ու փոխազդեցության բազմաբնույթ գործընթաց է, որը ծնվում է համատեղ գործունեության նպատակներից:

Հաղորդակցությունը կայուն բնածին և բնական վարքագիծ է և այն զարգանում է մեր տարիքի հետ զուգընթաց: Մենք փորձում ենք շտկել մեր խոսքը, մշակել ժեստերը:

Հաղորդակցական գործառույթների շնորհիվ հաղորդակցության գործընթացում մարդկանց միջև հաստատվում են փոխհարաբերությունների անհատական, խմբային և հասարակական մակարդակում:
Ըստ մանկավարժ Վ. Դյաչենկոյի, դիդակտիկան՝ ուսուցումը մարդկանց միջև հատուկ կերպով կազմակերպված հաղորդակցություն է, որի ընթացքում վերարտադրվում ու յուրացվում է պատմահասարակական փորձը՝ մարդկային գործունեության բոլոր տեսակները: Այսինքն ուսուցման որակը ուղիղ կապ ունի ուսուցման գործընթացի մասնակիցների միջև հաղորդակցման որակի հետ: Պարզ է, որ հաղորդակցման կարողությունները պետք է ձևավորվեն հենց դպրոցում, հենց այն պատճառով, որ ազդում է ուսուցման որակի վրա:Այն տեղի է ունենում ուսուցչի անմիջական ղեկավարությամբ:

Հաղորդակցումն իրենից բարդ գործընթաց է ներկայացնում, ուստիև ունի իր կառուցվածքը, բաղադրատարրերը, մեխանիզմները, գորխընթացային փուլերը և կողմերը:

Հաղորդակցման գործընթացի կառուցվածքային տարրերն են՝

- հաղորդակցության սուբյեկտները
- հաղորդակցման միջոցները
- հաղորդակցվողների պահանջմունքները
- հաղորդակցման արդյունքները

Հաղորդակցման սուբյեկտները մարդիկ են: Հաղորդակցում կարող է տեղի ունենալ երկու կամ ավելի մարդկանց միջև:

Հաղորդակցումը կատարում է մի շարք կարևոր գործառույթներ: Այդ գործառույթներից են՝

- հաղորդակցման միջոցով մենք բավարարում ենք մեր հաղորդակցվելու պահանջմունքը
- մենք հաղորդակցվում ենք, որպեսզի պահենք և կատարելագործենք մեր ինքնաճանաչողությունը
- հաղորդակցման միջոցով մենք կատարում ենք մեր սոցիալական պարտականությունները
- հաղորդակցման միջոցով կառուցում ենք մեր փոխհարաբերությունները

- հաղորդակցման ժամանակ մենք կատարում ենք տեղեկատվության փոխանակում
- մենք հաղորդակցվում ենք, որպեսզի ազդենք ուրիշների վրա:

Հաղորդակցման գործառույթներ ասելով մենք հասկանում ենք այն դերերը կամ խնդիրները, որոնք իրականացվում են հաղորդակցման միջոցով:

Հաղորդակցության գործընթացը ունի բազմաթիվ կողմեր, որոնց ամբողջությունն էլ կազմում է դրա բովանդակությունը: Սովորաբար առանձնացնում են հաղորդակցման գործընթացի հետևյալ կողմերըէ հաղորդակցում, ընկալում, շփում, փոխգործություն, փոխներգործություն:

Հաղորդակցման գործառույթի շնորհիվ մարդիկ շփվում են միմյանց հետ, հաստատում կապեր ու հարաբերություններ, որոնց հիման վրա էլ նրանց միջև ստեղծվում են հայացքների, գաղափարների ընդհանրության, հոգեբանական ու բարոյական մտերմության դաշտ, համատող գործունեություն ծավալելու և խնդիրներ լուծելու անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ: Հաղորդակցման ընթացքում մարդիկ փոխգործում և փոխազդում են միմյանց վրա, ընկալում ու գնահատում և մեկնաբանում-բացատրում մեկը մյուսի վարքագծի պատճառները:

Հաղորդակցական գործառույթների շնորհիվ հաղորդակցության գործընթացում մարդկանց միջև հաստատվում են փոխհարաբերությունների անհատական, խմբային և հասարակական մակարդակում:

Քանի որ մանկավարժը հիմնականում հաղորդակցվում է իր սաների հետ, ապա նրան անհրաժեշտ են տարբեր հմտություններ՝ տարբեր իրավիճակներում աշակերտների նկատմամբ ճիշտ վերաբերմունք դրսևորելու և արտահայտելու համար: Աշակերտները ենթագիտակցաբար ընկալում են մանկավարժի կիրառած բոլոր հաղորդակցական գործոնները և համապատասխան վերաբերմունքով արձագանքում են դրանց:

Մասնագիտական մանկավարժական հաղորդակցական կարողությունները Վ.Մ. Ցելյուկոն դասակարգել է երեք խմբով՝

1.Միջանձնային հաղորդակցական

2.Միջազգային փոխազդեցության

3.Այլ մարդկանց ընկալման և հասկացման կարողություններ

Գլուխ երկրորդ: Մանկավարժական հաղորդակցման հիմնական սկզբունքները

Հաղորդակցման ժամանակ հաճախ են ծագում դժվարություններ, արգելքներ, որոնք ունենում են թե հոգեբանական, թե սոցիալական դրդապատճառներ: Մանկավարժական պրակտիկայում դրանք ծագում են հիմնականում այն պատճառով, որ հաղորդակցվող մի կողմը՝ երեխան, գտնվում է ինքնաճանաչողության փուլում և ունի ցայտուն արտահայտված ինքնահաստատման պահանջմունք: Մյուս կողմը՝ մանկավարժը, մշտապես փորձում է գերակայող դիրք ընդունել և երեխային ենթարկել իր հրահանգներին և պահանջներին: Այստեղից ծագում են հաղորդակցական տարամակարդակ հարթություններ:

Մանկավարժական հաղորդակցման արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժի կողմից հաղորդակցման բոլոր տարրական բաղադրիչները ճիշտ և ներդաշնակ համադրումից:Հաղորդակցման ոճը որոշիչ նշանակություն ունի ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետության, ինչպես նաև անձի ձևավորման, խմբում միջանձնային հարաբերությունների հաստատման որակի վրա:

Դասի ժամանակ մանկավարժը պետք հնարավորինս լինի նրբանկատ չնչին իսկ փոփոխությունների նկատմամբ, անընդհատ հարմարեցնի մանկավարժական ներգործության մեթոդները՝ տվյալ իրավիճակին համապատասխան:

Ընդհանուր առմամբ տարբերակվում են գործունեության մի քանի ոճեր, որոց շարքում կառանձնացնենք նրանք, որոնք առավել բնորոշ են ժամանակակից ուսուցիչներին: Դեմոկրատական ոճը բնորոշվում է ուսուցչի օբյեկտիվ, հարգալից վերաբերմունքով աշակերտի նկատմամբ, յուրաքանչյուրի անհատական հատկանիշների, պահանջմունքների և անձնական փորձի հետ հաշվի նստելու ձգտումով: Նրա խոսքային վարքագծին բնորոշ են ճկունությունը, կարծրատիպերի բացակայությունը:

Ավտորիտար ոճին բնորոշ է գործնական մոտեցումը, հաղորդակցության կառուցման ժամանակ հստակ արտահայտված ցուցումները, պահանջները, որոնց հիմքում դրված են աշակերտի նկատմամբ միջինացված պատկերացումները: Որպես

կանոն այսպիսի ուսուցիչը կառավարվում է հնարավորությունների գնահատման ընդունված կարծրատիպերով:

Մաքուր հաղորդակցական ոճ պրակտիկայում չի հանդիպում: Սակայն դրանց այս կամ տեսակի գերակշռումով է պայմանավորում մանկավարժի անհատական հաղորդակցական ոճը, հետևաբար նրա գործունեությանն հաղորդակցման որակը: Անհատական ոճի ձևավորումը չի կատարվում անմիջապես, այն ձևավորվում է երկարատև պրակտիկ գործունեության ընթացքում, իհարկե եթե մանկավարժը դրսևորում է ինքնավերլուծություն, ինքնաքննադատություն, անընդհատ աշխատում է իր դրական հատկանիշների զարգացման ու բացասականների վերացման վրա: Ոճի դրական ու բացասական դրսևորումների մասին է խոսում սովորողների վերաբերմունքը՝ մանկավարժի և նրա կողմից դասավանդվող առարկայի նկատմամբ:

Հաղորդակցման ժամանակ մանկավարժի առաջին դիրքորոշումը արտացոլում է նրա կողմնորոշումը դեպի անձը, ամեն հարցում նա իր մեջ փնտրում է է թերություններ ու ձեռքբերումներ:Երկրորդի ժամանակ մանկավարժը փորձում է դիմացինի մեջ գտնել հաղորդակցմանը խանգարող հատկանիշները:

Ոչ խոսքային հաղորդակցումը մարդու շարժումների, դիրքի, տեսքի և ձայնի դրսևորումներն են՝ խոսքային տեղեկությունների, երկխոսության փոխանցման ժամանակ: Ոչ խոսքային հաղորդակցման միջոցները ծառայում են խոսքի իմաստի շեշտադրումը ուժեղացնելու համար: Կինետիկան գիտություն է, որն ուսումնասիրում է շարժումներն ու ժեստերը հաղորդակցման ընթացքում:

Մանկավարժը պետք է ունենա հստակ խոսքային և ոչ խոսքային հաղորդակցկան, ինչպես նաև, դրանք կարդալու կարողություններ և հմտություններ: Դրանով իսկ նա կարող է ուժեղացնել հաղորդվող գիտելիքների, խրատի, խրախուսանքի ազդեցությունը, ավելի ազդեցիկ դարձնել մատուցվող նյութի բովանդակությունը, ինչպես նաև երեխային ճիշտ ընկալելու հավանականությունը: Մանկավարժը նաև պետք է հասկանա ժեստերի լեզուն, որպեսզի ժամանակին նկատի ուշադրության շեղումը, հոգնածությունը և գտնի հետաքրքրությունը գրգռող միջոցներ, թուլացնի հոգեկան լարվածությունը, հանգստի դադար տա և համախմբի բոլորի ուշադրությունը:

Հաղորդակցման կառուցման ժամանակ պետք է հաշվի առնել նաև հնարավորինս մեծ թվով հանգամանքներ, որոնք կարող են նպաստել դրա արդյունավետության մեծացմանը: Դրանցից են անձի որոշ պահանջմունքներ.

- Ուշադրություն
- Ապահովություն
- Գնահատում, խոստովանություն
- Անպայման սեր
- Խրախուսանք
- Պատիժ

Ոչ խոսքային հաղորդակցման ժամանակ մեծ նշանակություն ունեն մշակութային տարբերությունները:Օրինակ՝ քաղաքակիրթ երկրներում զրուցակցի աչքերին չնայելը նշանակում է վիրավորանք, իսկ որոշ երկրներու այն կարող է արտահայտել հարգանք և պատկառանք: Եթե մարդը ցուցամատով և բութ մատով օղակ է կազմում, ապա ԱՄՆ-ում նշանակում է լավ, իսկ Ֆրանսիայում՝ 0, ոչինչ, արժեք չունեցող, Գերմանիայում, Բրազիլիայում, Ավստրալիայում՝ անշհնորք, վուլգար վիրավորական ժեստ :

Մանկավարժի ոչ խոսքային հաղորդակցումը շատ կարևոր է, քանի որ շատ դեպքերում, օրինակ՝ դասի ընթացքում մանկավարժը, առանց դասը միջամտելու, կարողանում է ժեստի միջոցով նկատողություն տալ այն աշակերտին, որը իրեն վայելուչ չի պահում:

Ուսուցչի բանավոր խոսքը, որ լսում և հետագայում վերարտադրում են աշակերտները, նախնական ուսուցման անհրաժեշտ մասն է կազմում: Երեխաներն ավելի շատ սիրում են լսել, քան թե կարդալ, հենց այն պատճառով, որ առաջին երկու-երեք տարվա ընթացքում ընթերցանության պրոցեսը հոգնեցնում է նրանց: Բացի այդ երեխաներին պետք է սովորեցնել ոչ միայն կարդալ, այլև ուշադիր լսել, իսկ հետո յուրացնելև հաղորդել լսածը:

Դասարանական զրույց կազմակերպելու շնորհքը ուսուցիչների մոտ քիչ է պատահում ոչ այն բանի համար, որ դա բնական հազվագյուտ տուրք է, այլ նրա համար, որ նույնիսկ շնորհալի մարդն էլ պետք է շատ աշխատի, որ իր մեջ իսկական մանկավարժական զրույց կազմակերպի:

Մանկավարժական զրույցն ամեն մի այլ զրույցի նման չպետք է աչքի ընկնի միայն իր հետաքրքրությամբ, այլ իր մեջ պետք է պարունակի իսկական մանակավարժական որակ. նա պետք է այնպիսին լինի, որ հեշտությամբ տպավորվի երեխաների գլխում, որպեսզի, լսելով զրույցը մինչև վերջ, երեխան հիշի նրա սկիզբն ու միջին մասը, և պետք է զրույցը չոր ու ցամաք չլինի:

Զրույցների թեմա կարող է լինել այն ամենը, ինչը մատչելի է երեխաների մտքին, և եթե ուսուցիչն մանկավարժական պատմվածքներ չգիտի, ապա կարող է այդ պատմվածքները քաղել մանկական գրքերից և քրեստոմատյաներից: Բայց պատմվածքը պետք է նախորոք մշակված լինի, որպեսզի զրույցի ժամանակ օտար դարձվածք չնկատվի:

Արտասահմանյան լավագույն դպրոցներում ուսման առաջին տարվա ընթացքում (6-ից մինչև 8 տարեկան երեխաներին) հաղորդվում է մի տասնյակ զրույց, ոչ ավելի: Երկրորդ տարվա ընթացքում այդ բոլոր զրույցները նորից կրկնվում են՝ լրացումներով և բացատրություններով, և նրանց գումարվում է ևս 10-ից 15 զրույց: Ուսման երկրորդ տարվա ընթացքումնորից կրկնվում են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տարվա ընթացքում անցած զրույցները՝ նոր մանրամասնություններով ու բացատրություններով և այլն:

Այս մեթոդը հոգեբանական հիմք ունի:

Երեխայի բազմաթիվ տպավորություններով չծանրաբեռնված հոգին ընդունակ է ամեն տեսակի հստակ պատկերների ընկալմանը և միևնույն ժամանակ ընդունակ չէ ոչ վերացումների, ոչ էլ այն հետևողականությանը, որը պահանջվում է պատմության ուսումնասիրման համար: Բայց նա, ով կցանկանար այդ կառուցումն սկսել ժամանակից շուտ, երեխայի հոգուց կպահանջեր մի բան, որը նա չի կարող տալ:
Մի անգամ արդեն հաղորդված զրույցները պետք է հետագայում անընդհատ կրկնվեն, ոչ նրա համար, որ վերականգնվի մոռացվածը, այլ նրա համար, որ կանխվի մոռանալու հնարավորությունը:

Մոռացվածը վերհիշելու համար կրկնությունն արդեն ցույց է տալիս ուսուցման թերությունը: Երեխաներն իրենք բոլորովին չեն սիրում կրկնել այն, ինչ սովորել են ու մոռացել, և շատ են սիրում պատմել այն, ինչ հիշում են:

Առաջին անգամ պատմելով մի որևէ իրադարձություն, ուսուցիչը պետք է հաղորդի նրա գլխավոր գծերը և երկու-երեք հետաքրքրական գեղեցիկ մանրամասնություն: Եթե ուսուցիչը հենց առաջին անգամից իրադարձությանը կապի բազմաթիվ մանրամասնություններ ու բացատրություններ, ապա ամբողջ զրույցը կխարխլվի երեխայի գլխում:

Երեխաների պատմելով իրադարձությունը՝ պետք է հատուկ ընդգծումով շեշտել փաստերն ու հատուկ անունները, հետո երեխաներին դիմել հարցերով, իհարկե սկզբից այնպիսի հարցերով, որոնց պատասխանելով երեխաները հաղորդեն իրադարձության գլխավոր գծերը: Այնուհետև դրան հաջորդում է մանրամասնություններն սպառող հարցերի մի շարք:

Այնուհետև պետք է ավելի ընդունակ երեխաներից պահանջել, որ նրանք կապակցված և հաջորդականորեն պատմեն բոլորը, ինչ լսել են: Այդ միջոցին պետք է պատմողին ընդհատել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Երբ աշակերտները վերջացրել են պատմելը, ուրիշները լրացնում են նրա բացթողումները:

Շատ օգտակար է , որ ուսուցիչը որոշ ժամանակ անց, ասենք հաջորդ տարին, անձամբ պատմի աշակերտների կողմից արդեն յուրացված այդ նույն պատմվածքը այնպիսի նոր մանրամասնություններով և էպիզոդներով, որոնք երեխաները դեռ չգիտեն: Աշակերտները պետք է նկատեն, թե ուսուցչի պատմածի մեջ ինչ նոր բան է ավելացված և այդ լրացումը խոր կարմատավորվի նրանց հիշողության մեջ:

Մանկավարժական միջավայրում գերիշխում է այն կարծիքը, որ ուսուցիչները տիրապետում են հաղորդակցական ընդհանուր կարողություններին և սովորողների մոտ դրանց ձևավորման համար անհրաժեշտ միջոցներին ու ձևերին: Սակայն գործնականում այդ պնդումները հերքվում են, քանի որ հաճախ ենք ականատես լինում այն փաստին, որ ուսուցիչների մոտ ոչ բավարար մակարդակով են ձևավորված հաղորդակցական ընդհանուր կարողությունները:Ուստի զարմանալի չէ, որ աճող սերնդի հաղորդակցման մշակույթի ձևավորումը նույնպես անբավարար հիմքերի վրա է կառուցված, քանի որ անհնար է փոխանցել մի բան, որը բացակայում է կամ՝ թերի է :

Մանկավարժական հաղորդակցման ընթացքում չի բացառվում նաև կոնֆլիկտային իրավիճակների առկայությունը: Մարդու կյանքը իրենից

ներկայացնում է հաճախակի անցում մի կոնֆլիկտային իրավիճակից մյուսին: Լատիներենից թարգմանաբար կոնֆլիկտ (cofliocтus) նշանակում է հակառակ հետաքրքրությունների, հայացքների, լուրջ տարաձայնությունների, վեճերի բախում: Սողոմոն Իմաստունը իր առակներից մեկում գրել է. Բարկացկոտ մարդը կռիվ կգրգռե, բայց երկայնամիտը վեճը կհանգստացնե. ուրախություն է մարդու համար իր բերանի պատասխանը. և խոսքն իր ժամանակին՝ ինչ լավ է: Մարդու հետ զուր տեղը մի վիճիր, եթե նա քեզ չարություն չի արել :

Մանկավարժը անընդհատ կարող է հայտնվել բախումնավտանգ իրավիճակներում, քանի որ հաղորդակցում է տարբեր բնավորությունների, հետաքրքրությունների, տարբեր ընտանիքներից սերված երեխաների, ծնողների, վարչական աշխատողների ու գործընկերների հետ: Ուստի նա պետք է ունենա §բախումնավտանգ իրավիճակները կանխատեսելու և կանխելու հզոր զինանոց¦: Կոնֆլիկտները լինում են.

- Ներանձյա
- Միջանձնային
- Ներխմբային
- միջխմբային

Կոնֆլիկըային մարդիկ լինում են՝

- կոպիտներ
- ագրեսիվներ
- բռնկվողներ

Նման մարդկանց համապատասխան արձագանքելու համար կարևոր է ատրիբուցիան՝ այսինքն վարքագծի պատճառների բացահայտումը: Իր մանկավարժական պրակտիկայում ուսուցչի ռեակցիան աշակերտների արարքներին, ներկայացնում է մանկավարժական ներգործությունների մի անբողջ հմալիր՝ դաստիարակչական, ուսումնական, կրթական, զարգացնող և ձևավորող բաղադրատարրերով: Ինչպես ասել է Սիմոն Սալովեչիկը, Ուսուցումը պայքար է աշակերտի հետ, այն բացառում է մենամարտը, այն համագործակցություն է, հաղորդակցություն: Բախումներից խուսափելու միջոցներն են բարյացկամությունը, համբերությունը, արժանապատվությունը, մարդկայնությունը, փոխադարձ հարգանքը:

Մանկավարժը տիրապետելով հաղորդակցման հմտությանը կարող է բազմատեսակ կոնֆլիկտային իրավիճակից դուրս գալ: Հաղորդակցման հմտությունները ձեռք են բերվում կյանքի ընթացքում:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով և ուսումնասիրելով, թե ինչ է մանկավարժական հաղորդակցումը , կարելի էհանգել այն եզրակացությանը, որ մանկավարժական հաղորդակցումը ուսումնադաստիարակչական պրոցեսում հանդիսանում է այն հզոր զենքը, որին հստակ տիրապետող մանկավարժը կարողանում է ցանկացած ժամանակ, ցանկացած իրավիճում իր խոսքը կառուցել այնպիսին, որ լսողի մոտ հստակ տպավորվի նրա ասելիքը:

Մանկավարժությունը, լինելով գիտություն երեխաների ու մեծահասակների դաստիարակության, ուսուցման և կրթության մասին, կարող է հաջողությամբ զարգանալ, եթե կա փոխադարձ հարգանք, վստահություն և հոգատարություն: Այդ ամենի համար անհրաժեշտ է, որ հաղորդակցումը կառուցված լինի բարդրացիական հարաբերությունների հիման վրա: Իսկ որպեսզի մանկավարժի հաղորդակցման կարողությունները զարգանան լավ, մանկավարժները և հոգեբանները խորհուրդ են տալիս հետևյալը.

.Մանկավարժի անկեղծությունն ու բնականությունը հաջող փոխհարաբերությունների կառուցման գրավականն են:

.Մանկավարժի հարաբերությունները պետք է կառուցվեն սուբյեկտների փոխադարձ հարգանքի վրա:

.Նպաստի աշակերտի խոսքային գործունեության ավելացմանը:

.Նույնիսկ աշակերտի չնչին հաջողությունների ժամանակ խրախուսի նրանց:Խրախուսել պետք է այլոց ներկայությամբ, իսկ խրատել՝ առանձին:

.Դրսևորի զարգացած դիտողականություն, երևակայություն, հուզական վիճակները հասկանալու և վարքագիծը վերլուծելու կարողություններ:

.Մանկավարժը պետք գիտակցի, որ դպրոցը հասարակության մի մասն է, իսկ մանկավարժի վերաբերմունքը երեխաների նկատմամբ՝ հասարակական պահանջը: Ուսուցիչը չպետք է բացահայտ մանկավարժական դիրք ընդունի և կատարի միայն մասնագիտական պարտականություններ: Երեխաները պետք զգան և տեսնեն նրա

խոսքի և գործի մեջ համապատասխանությունը, որոնցում պետք է արտացոլվեն ուսուցչի անձնական համոզմունքները:

Եթե դասարանը համեմատենք նավի հետ, նավապետը այս դեպքում ուսուցիչն է, որի խոսքը ինչպես ասել է Միշել դե Մոնտեն, եթե կառուցվում է աղմուկով, ցույց է տրվում, թե ինչքան թույլ է իր արտահայտած միտքը: Ուստիև ուսուցիչը պետք է ամեն րոպե, ամեն վայրկյան գիտակցի, որ իր արտահայտած յուրաքանչյուր միտք պետք է լավ կշռադատված լինի, քանի որ այստեղ երեխաներն են՝ իրենց հատուկ բնորոշ հոգեբանությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ն. Հակոբյան, Ս. Գևորգյան, Ա Հովհաննիսյան, Ա. Դավթյան, Մանկավարժական հաղորդակցում»,

ԵՐ.Ա 2010թ, հեղինակային հրատարակություն

Ա. Վ. Պետրովսկի, Ընդհանուր հոգեբանություն, ԵՐ. 1974թ Լույս» հրատարակչություն

Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան ,Մանկավարժություն,ԵՐ., 2005, Մանկավարժ» թերթ

Կ.Դ. Ուշինսկի «Մանկավարժական ընտիր երկեր» Լույս հրատարակչություն 1981 թ.

14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն _____էջ 2

2. Մանկավարժական հաղորդակցում_____ էջ4

3. Ի±նչ է մանկավարժական հաղորդակցումը_____էջ 5

4. Հաղորդակցման գործընթացի կառուցվածքը_____էջ 6

5. Մանկավարժական հաղորդակցման սկզբունքները___էջ 7

6. Մանկավարժական հաղորդակցման ոճեր և մոդելներ_էջ 8

7. Մանկավարժի ոչ խոսքային հաղորդակցումը_____էջ 9

8. Մանկավարժական հաղորդակցումը ուսումնական գործընթացում_____էջ10

9. Մանկավարժական կոնֆլիկտներ_____էջ 12

10.Եզրակացություն_____էջ 13

11Գրականության ցանկ_____էջ 14

12.Բովանդակություն_____էջ 15

Ներածություն

Առօրյա կյանքում, տանը, դպրոցում, աշխատավայրում, փողոցում և առհասարակ ամեն տեղ մենք անընդհատ գտնվում ենք հաղորդակցական իրավիճակներում, որտեղ շփվում ենք ծանոթ և անծանոթ մարդկանց հետ: Ի±նչ ասել է հաղորդակցում:

Հաղորդակցումը մարդկանց միջև սոցիալական շփման զարգացման բազմապլանային պրոցես է, որը ծնվում է համատեղ գործունեության պահանջմունքներից: Հաղորդակցումը մարդու կենսագործունեության պայմանն է, նրա առաջնային ու հիմնարար պահանջմունքներից մեկը, հետևաբար նաև դրա բավարարման պայմանը, հիմքն ու միջոցը: Հաղորդակցման միասնական պրոցեսում պայմանականորեն կարելի է առաջացնել երեք կողմեր՝ ինֆորմացիայի փոխանցում, փոխազդեցություն և փոխադարձ ընկալում: Հաղորդակցումը ոչ միայն առանձին մարդու, այլև հանրույթների՝ ցեղերի, ժողովուրդների, ազգերի, պետությունների գոյության ու զարգացման նախապայմանն է: Դրանով են մարդիկ ստեղծում խմբեր, հանրույթներ, մշակում համատեղ գործունեության ծրագրեր և նախանշում դրանց իրականացման ուղիները:Հաղորդակցումը նաև անձի ձևավորման ու սոցիալականացման կարևորագույն գործոն է:Դրա շնորհիվ ձևավորվում և զարգանում են հոգեկանին բնորոշ զուտ մարդկային ձևերն ու միջոցները, մասնավորապես գիտակցութունն ու լեզուն: Մարդիկ, որպես հաղորդակցման կարևորագույն միջոց, դիմում են լեզվի օգնությանը: Առանց լեզվի մարդիկ չեն կարող հաղորդակցվել միմյանց հետ և մտքեր փոխանակել :

Մարդը, իբրև անձ, չի կարող զարգանալ հասարակությունից դուրս, նրանից անկախ: Ինչպես ասում է հին աշխարհի մեծ իմաստասեր Արիստոտելը §մարդը հասարակությունից դուրս կամ աստված է կամ գազան¦: Իսկ Կառլ Մարքսը անձը դիտարկեց որպես հասարակական հարաբերությունների համակցություն և գտավ, որ ինչպիսին այն հասարակական հարաբերություններն են, որոնց պայմաններում ապրում ու գործում է մարդը, ինչպիսին նրա կենսագործունեությունն է, այնպիսին էլ ինքը մարդն է:§Անհատի զարգացումը,-գրում է Կառլ Մարքսը,-կախված է ուրիշ անհատների զարգացման մակարդակից, որոնց հետ նա գտնվում է ուղղակի կամ անուղղակի հաղորդակցման մեջ¦:

§Հաղորդակցումը մարդկային գանձերից ամենաշքեղ գանձն է,¦ -նկատել է Անտուան Էքզյուպերին: Այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն մարդկային հասարակության գոյության անհրաժեշտ պայմանն է, սերունդների կապի ու հաղորդակցության միջոցը, անձի ձևավորման կարևորագույն գործոններից մեկը:

2

Ինչպես ասել է նշանավոր հոգեբան Ս. Լ. Ռուբինշտեյնը §հաղորդակցումը վերաբերմունք է աշխարհի, ուրիշ մարդկանց և ինքն իր նկատմամբ¦:

Մանկավարժական հաղորդակցումը ըստ իրականացման ձևի ներկայացնում է սովորողի վրա մանկավարժի կողմից (և հակառակը) փոխազդեցության հնարների համակարգ: (Ա.Վ. Պետրովսկի):Մանկավարժական հաղորդակցման տակ հասկացվում է մանկավարժի և սովորողների կոլեկտիվի փոխազդեցության հնարների և ունակությունների համակարգը, որի բովանդակությունն են կազմում ինֆորմացիայի փոխանակությունը, փոխընբռման, կազմակերպման ուսումնադաստիրակչական ներգործության ցուցաբերումը:

Մանկավարժը հանդես է գալիս որպես այդ պրոցեսի ինդիկատոր, կազմակերպում և ղեկավարում է այն: (Ա.Վ. Պետրովսկի):

Մանկավարժական հաղորդակցման գործընթացում կարևոր է ուսուցչի խոսքային ընդունակությունը: Խոսքային ընդունակությունը ուսուցչի մտքերն ու զգացմունքները խոսքի, ինչպես նաև դիմաշարժության ու մնջախաղի միջոցով պարզ ու հստակ արտահայտելու ընդունակությունն է: հաղորդակցումը հասարակական կյանքի համապարփակ երևույթներից մեկն է , այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները:

§Ինֆորմացիայի հաղորդումը ուսուցչից աշակերտին կրում է հիմնականում երկրորդ ազդարարային խոսքային բնույթ¦,-այսպես է ասել Վ. Ա. Կրուտեցկին: Այսինքն հաղորդակցման մեջ հաշվի է առնվում խոսքի ներքին և արտաքին առանձնահատկությունները: ՈՒսուցչի խոսքը տարբերվում է ներքին ուժով ու համոզվածությամբ:

հբգֆցՎարպետ ուսուցչի խոսքը առաջին իսկ բառից, նախադասությունից ակտիվացնում է դպրոցականների միտքը և ուշադրությունը: Վարետ ուսուցիչը իր խոսքին զուգակցում է հումորը, սրամտությունը, կատակը, բարյացկամ հեգնանքը: Նա խուսափում է հակիրճ խոսքից, քանի որ աշակերտը այդպես լավ չի յուրացնի ուսումնական նյութը: Ուսուցիչն իր խոսքին պետք է տա չափված ձև: Աշակերտներին անհետաքրքիր է լսել միապաղաղ, միալար, ձգձգված խոսք: Շատ կարևոր է նաև խոսքի տեմպը: Արագ տեմպը խանգարում է յուրացմանը, հոգնեցնում է և երեխայի մոտ առաջացնում է պաշտպանական արգելակում: Բազմափորձ ուսուցիչը խուսափում է խոսքի դանդաղ տեմպից , քանի որ այն առաջացնում է ձանձրույթ: Խուսափում է նաև ճղճղան-ճչան ձայնից: Ցածր, կամաց ձայնը նույնպես անընդունելի է, որովհետև վատ է լսվում այն: ՈՒսուցչի ժեստերը պետք է լինեն չափավոր: